Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 937 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԱՊԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (գործող պայմանագրի համաձայն), Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինների, մարզպետների աշխատակազմերի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության, Միասնական սոցիալական ծառայության դեպք վարողների, Խնամակալության և հոգաբարձության մարմինների և այլ կառույցների կողմից ուղղորդման, հասարակական կազմակերպությունների, համայնքային սոցիալական աշխատողների ահազանգի, «ԹԵԺ ԳԻԾ» ծառայության ահազանգերի, իրենց՝ երեխաների ահազանգի, ինչպես նաև ծնողների, խնամակալների դիմումների, և երեխայի անձամբ դիմելու պարագայում բռնության ենթարկված, անապաստան, լքված, կրթությունից և այլ հանրային ծառայություններից դուրս մնացած, ինչպես նաև այլ տրավմատիկ տարաբնույթ իրադարձությունների, մասնավորապես տեղահանության հետևանքով հոգեհուզական խնդիրներ ունեցող երեխաներին, նրանց ծնողներին, խնամող և խնամողի փոխարինող հանդիսացողներին (խնամատար ծնողներ) «ճգնաժամի միջամտության» ծառայությունների մատուցում և երեխաների պաշտպանությամբ զբաղվող մասնագետների կարողությունների զարգացում: Ճգնաժամի միջամտությունն իրականացվում է երեխաների համար ներկենտրոնային (շուրջօրյա խնամք) և արտակենտրոնային ծառայությունների միջոցով, իսկ ծնողների հետ աշխատանքը՝ հանդիպումների միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:

3.	Բարեգործը	Հայ օգնության ֆոնդ (630 երկրորդ պողոտա, Նյու-Յորք, ԱՄՆ)
4.	Ծրագիրը կատարողը	«Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Կ. Ուլնեցու փողոց 64, ՀՎՀՀ՝ 01009295)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը: Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	143,311,476 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Բարձր սոցիալական ռիսկի ներքո գտնվող՝ անապաստան, խնամազուրկ, լքված, բռնությունների զոհ, կրթությունից դուրս մնացած, վարքային խնդիրներ ունեցող երեխաները և նրանց ընտանիքները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից տեղահանված այն երեխաները և նրանց ընտանիքները, որոնք արագ միջամտության և աջակցության կարիք ունեն: Ներկենտրոնային ծառայությունների շրջանակներում կսպասարկվի մոտ 300 երեխա և աշխատանք կտարվի նրանց ծնողների հետ, (միջին հաշվով 500 ծնող/խնամող կամ խնամողին փոխարինող՝ հաշվի առնելով, որ ոչ բոլոր երեխաներն ունեն երկու ծնող), ինչպես նաև խնամատարության տրված 100 երեխա և նրանց խնամքն իրականացնող մոտ 200 խնամատար ծնող: Արտակենտրոնային ծառայությունների շրջանակներում ծառայությունից կօգտվի մոտ 2500 երեխա և ավելի քան 2000 ծնող/խնամող, մոտ 200 մասնագետ: Ակնկալվում է, որ տարվա ընթացքում ծառայություններ կստանան մինչև 5800 շահառու (երեխա, ծնող, խնամող և խնամողի փոխարինող հանդիսացող, խնամատար ծնող, երեխաների պաշտպանությամբ զբաղվող մասնագետ):
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել կյանքի դժվարին վիճակում գտնվող և հրատապ միջամտության կարիք ունեցող երեխաների սոցիալական, հոգեբանական, բժշկական, սոցիալ-մանկավարժական և մասնագիտական այլ աջակցության, խնամքի և օգնության կազմակերպում՝ Ապաստանման, Թեժ գիծ, Արտակենտրոնային, Խնամատարությանն աջակցող ծառայությունների միջոցով: Այդ

		երեխաներից՝ առավել բարձր ռիսկի ներքո և կյանքի ու զարգացման համար վտանգավոր պայմաններում գտնվողները ժամանակավորապես ապաստանվում են Կենտրոնում և ստանում 7/24 հոգածություն, խնամք, պաշտպանություն, սոցիալ-հոգեբանական, առողջապահական, իրավական ծառայություններ, իսկ բարձր ռիսկի ներքո, սակայն պաշտպանության այլ՝ ընտանեկան կամ համայնքային հնարավորություններ ունեցող երեխաները աջակցություն են ստանում անմիջապես իրենց համայնքում և ընտանիքում: Աջակցությունը ներառում է աշխատանք երեք մակարդակներում՝ անհատականացված աշխատանք երեխայի հետ, ընտանեկան թերապիա՝ ընտանիքի անդամների հետ, համայնքային աշխատանք՝ սոցիալական միջավայրի հետ: Հոլիստիկ մոտեցմամբ այս աշխատանքը ներառում է երեխայի/ընտանիքի իրավիճակի բազմամասնագիտական գնահատում, անհատական աշխատանքի պլանի ստեղծում, միջամտության պլանի ստեղծում և իրագործում, մոնիթորինգ և վերանայումներ՝ ըստ անհրաժեշտության: Ծառայությունները մատուցվելու են երեք մոտեցմամբ՝ անմիջապես Կենտրոնում՝ 24-ժամյա ապաստանման, Կենտրոնում՝ առանց ապաստանման, արտագնա՝ անմիջապես երեխայի ընտանիքում կամ ցերեկային կենտրոններում: Ներկենտրոնային ծրագրի շահառու երեխաները ստանում են ծառայությունների ամբողջ փաթեթը՝ խնամք (հիգիենա, սնունդ), սոցիալ-հոգեբանական աջակցություն, առողջապահական (տեղում կամ ստացիոնար բուժ. հաստատությունում), կրթական, մշակութային, մասնագիտական կողմնորոշման աջակցություն, թերապևտիկ ծառայություններ՝ հաղթահարելու բռնարարքների, լքումների և այլ վնասող վերաբերմունքի պատճառով առաջ եկած տրավմաները: Ճգնաժամային միջամտության շրջանակներում ծառայությունների մատուցումը տևում է միջինը մեկ ամիս, անհրաժեշտության դեպքում՝ խնդրի յուրահատկություններից և երեխայի/ընտանիքի կարիքներից ելնելով մինչև 6 ամիս և ավելի՝ համապատասխան հիմնավորմամբ: Արտակենտրոնային ծառայությունների միջոցով երեխան/ընտանիքը սպասարկվում են տեղում, իրենց ընտանիքում և համայնքում, մասնագետները իրենց աշխատանքը իրականացնում են անմիջապես երեխայի ընտանիքում: Այս դեպքում երեխան ստանում է իր կարիքներին համապատասխան, բոլոր վերը հիշատակված ծառայությունները, բացի ապաստանումից և խնամքի ծառայություններից: Մասնագետները տեղում համախմբում են բոլոր այն կառույցներին և ծառայություններին, որոնք առնչվում են տվյալ ընտանիքի հետ, կազմակերպում դեպքերի քննարկումներ՝ օգնելու երեխային/ընտանիքին՝ հաղթահարելու ստեղծված ռիսկային

		իրավիճակը: Սոցիալ-հոգեբանական աջակցություն տրամադրելու նպատակով երեխաների ծնողների հետ կապ է պահպանում 3-6 ամիս տևողությամբ՝ հեռախոսային կամ թերապևտիկ ու տեղեկատվական հանդիպումների միջոցով: Երեխաները Կենտրոն են ուղղորդվում ՀՀ բոլոր բնակավայրերից, առանց տարածքային սահմանափակումների: Ծախսերը ներառում են երեխաների խնամքի, հիգիենայի, սննդի, հագուստի, տուն այցերի, երեխաների տեղափոխման (ներառյալ արտադասարանային, հոբիների զարգացման, լրացուցիչ հմտությունների զարգացման, լրացուցիչ հմտությունների ուսուցման), առողջապահական, կրթական, օրվա զբաղվածության կազմակերպման, արտակենտրոնային մշակութային և արտադասարանային միջոցառումների կազմակերպման, շենքի պահպանության, կոմունալ-կենցաղային և այլ տնտեսական, ինչպես նաև խնամող, մասնագիտական, ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերն ու սահմանված հարկերը: 2. Նախատեսվում է 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում «Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամի շահառու երեխաների համար իրականացնել ընդհանուր 143,311,476 դրամ արժեքով ծրագիր, որն ըստ եռամսյակների բաշխվելու է հետևյալ կերպ. առաջին եռամսյակ՝ 35,827,869 դրամ, երկրորդ եռամսյակ՝ 35,827,869 դրամ, երրորդ եռամսյակ՝ 35,827,869 դրամ և չորրորդ եռամսյակ՝ 35,827,869 դրամ, որից՝ 1) սննդի ձեռքբերում - 11,000,000 դրամ. 2) բժշկական սպասարկում/դեղորայքի, մանկական հագուստի, տնտեսական ապրանքների ու պարագաների ձեռքբերում - 6,000,000 դրամ. 3) հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ձեռքբերում - 5,120,000 դրամ. 4) կոմունալ ծառայություններ - 8,821,470 դրամ. 5) շահառուների սպասարկմանն անհրաժեշտ տրանսպորտային ծառայությունների, վառելիքի, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ու ընթացիկ վերանորոգման ծառայությունների ձեռքբերում - 3,500,000 դրամ. 6) վարչական աշխատակազմի աշխատավարձ - 6,500,000 դրամ. 7) կապ և հեռահաղորդակցություն - 870,000 դրամ. 8) շահառուների հետ տարվող խնամքի և սոցիալ-հոգեբանական աշխատանքների իրականացում (մասնագետների աշխատավարձ) - 95,000,000 դրամ.

		9) գրասենյակային պիտույքների, համակարգչային տեխնիկայի, սարքավորումների և պարագաների ձեռքբերում - 1,000,000 դրամ. 10) մասնագիտական աշխատակազմի վերապատրաստման ծախսեր - 3,000,000 դրամ. 11) շենքի պահպանման/սպասարկման ծախսեր 2,500,000 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) էլեկտրական էներգիայի ծառայությունների ձեռքբերում՝ 3,500,000 դրամ. 2) բնական գազի ծառայությունների ձեռքբերում՝ 4,000,000 դրամ. 3) գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում՝ 121,470 դրամ. 4) ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ձեռքբերում՝ 1,200,000 դրամ. 5) հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերում՝ 170,000 դրամ. 6) էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ձեռքբերում՝ 700,000 դրամ, 7) սննդի և շշալցված ջրերի ձեռքբերում՝ 11,000,000 դրամ. 8) հաշվապահական հաշվառման ծառայությունների ձեռքբերում՝ 4,560,000 դրամ. 9) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 560,000 դրամ. 10) գրասենյակային պիտույքների, համակարգչային տեխնիկայի, սարքավորումների և պարագաների ձեռքբերում՝ 1,000,000 դրամ. 11) մանկական հագուստի, տնտեսական ապրանքների ու պարագաների ձեռքբերում՝ 5,500,000 դրամ. 12) վառելիքի ձեռքբերում (բենզին, դիզել)՝ 1,500,000 դրամ. 13) ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ու ընթացիկ վերանորոգման ծառայությունների ձեռքբերում՝ 2,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 15,990,000 դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 11,2 %-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է՝ 1) վարչական աշխատակազմի աշխատավարձ - 6,500,000 դրամ. 2) հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ձեռքբերում - 5,120,000 դրամ. 3) կապ և հեռահաղորդակցություն - 870,000 դրամ. 4) շենքի պահպանման/սպասարկման ծախսեր - 2,500,000 դրամ. 5) գրասենյակային պիտույքների, համակարգչային տեխնիկայի, սարքավորումների և պարագաների ձեռքբերում - 1,000,000 դրամ:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններ, Մարզպետների աշխատակազմերի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն, Միասնական սոցիալական ծառայության տարածքային բաժիններ, համայնքային խնամակալության հանձնաժողովներ, միջազգային կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ և այլն:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունն իրականացվելու է Հայ օգնության ֆոնդի Նյու Յորքի և հայաստանյան գրասենյակների, «Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամի խորհրդի կողմից: Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

26.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ